336.3
Խ-11

# ՀՐԱՀԱՆԳ

## ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՊԵՏՎԱՐԿԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄՇՏԱԿԱՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

17.06.2013

336.3 ա8
Խ-11

17 FEB 2010

909

# ՀՐԱՀԱՆԳ

## ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՊԵՏՎԱՐԿԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄՇՏԱԿԱՆ ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

---

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻ

ՅԵՐԵՎԱՆ 1929 թ.

12636 - 57

17 FEB 2010

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 506
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 2846 (բ)
ՏԻՐԱԺ 2500

## I. ՕԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ.

1. Մասսաների ամենափոքր խնայողությունները հավաքող ԽՍՀՄ-ի ներքին պետական փոխառությունները ու խնայողական դրամարկղները ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության ֆինանսավորման ամենակարևոր աղբյուրն են հանդիսանում։ Պետական փոխառությունների և խնայողական դրամարկղների զարգացումը աշխատավորական մասսաների գործն է հանդիսանում։ Այդ պատճառով նոր փոխառությունների կազմակերպումը, դրամարկղներում նոր ավանդատուների ներգրավումը, խնայողական դրամարկղների բազմամիլիոն ավանդատուներին ու փոխառության ունեցողներին սպասարկելը պետք է կառուցվի հասարակական ինքնագործունեության հիմունքներով։

Պետ-վարկի և խնայողական գործի մշտական օժանդակող հանձնաժողովները, որոնք կազմակերպվում են ձեռնարկություններում և հիմնարկություններում, նաև բոլոր խորհուրդներին ու գործկոմներին կից, հանդիսանում են խորհրդային հասարակայնության ինքնագործունեության մարմինները։

2. Օժանդակող հանձնաժողովներն իրենց վրա դրված խնդիրները կարող են ի կատար ածել միայն հանձնաժողովի լիանդամ աշխատանքի միջոցով. իրենց առօրյա աշխատանքների մեջ, հենվելով այն կոլեկտիվների փոխառություններ պահող ու խնայողական գանձարկղում դրամ մուծող մասսաների վրա, որոնց մեջ օժանդակող հանձնաժողովները աշխատում են։

3. Օժանդակող հանձնաժողովներն իրենց վրա դրված աշխատանքները հաջողությամբ կատարելու համար, պարտավոր են մշտական կապ պահպանել այն վարկային հիմնարկություններ ու խնայողական դրամարկղների հետ, որոնցից ստանում են ագիտացիոն ինֆորմացիոն և տեղական բնույթ կրող բոլոր անհրաժեշտ նյութերը։ Ընդ որին հանձնաժողովներն իրենց առօրյա աշխատանքների ընթացքում պետք է սերտ կապ պահպանեն հենց իրենց փոխառություն պահողների ու խնայողական դրամարկղների ավանդատուների հետ այն հաշվով, որ ըստ հնարավորության կարողանան բավարարել նրանց բոլոր հարցումներն ու պահանջները։

## II. ՈԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

4. Ստորին ցանցի մշտական օժանդակող հանձնաժողովները կազմակերպվում են բոլոր այն ձեռնարկություններին, հիմնարկություններին ու կազմակերպություններին կից, վորտեղ գոյություն ունեն բանվորների ու ծառայողների կոմիտեներ (գործարանային, հանքավորների, կառուցողների և բանվորների ու ծառայողների տեղական կոմիտեներ):

Ծանոթություն 1.—Այն ձեռնարկներում, հիմնարկներում ու կազմակերպություններում, ուր կոլլեկտիվի փոքր լինելու պատճառով արհմիութենական կանոնադրությունները չեն նախատեսել բանվորների ու տեղական կոմիտեների կազմակերպման գործը, օժանդակող հանձնաժողովները գումարվում են խմբակային, շրջանային և սրանց նման կոմիտեներում:

Ծանոթություն 2.—Սույն հրահանգը չի տարածվում համագործակցության, զինվորական և ծովային կոմիսարիատի և Պետքաղվարչության օժանդակող հանձնաժողովների վրա:

5. Մշտական հանձնաժողովները կազմակերպվում են հետևյալ կերպով—բանվորները և բանվորների ու ծառայողների տեղական կոմիտեն, կուսբջիջը և վարչությունն օժանդակող հանձնաժողովի կազմի համար ընտրում են մի-մի ներկայացուցիչ: Բացի դրանից, հանձնաժողովի կազմի մեջ են մտնում բանվորների ու ծառայողների ներկայացուցիչները, 4 հոգուց վոչ պակաս:

Օժանդակող հանձնաժողովի ներկայացուցիչներ ընտրելու համար կոլլեկտիվի կողմից հրավիրվում է առանձին ժողով (ընդհանուր կամ պատգամավորական): Այդ ժողովները պետ-վարկի և օժանդակող հանձնաժողովի խնդիրների մասին զեկուցում լսելուց հետո վորոշում են կոլլեկտիվի կողմից ընտրված օժանդակող հանձնաժողովի անդամների թիվը և հաստատում ընտրական կարգը: Օժանդակող հանձնաժողովների անդամների ընտրությունները կարող են բանվորների ու ծառայողների ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում կատարվել, կամ ցեխերում ու բաժանմունքներում, յուրաքանչյուր ցեխի ու բաժանմունքի բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովներում: Բանվորների ու ծառայողների ընդհանուր կամ պատգամավորական ժողովների վորոշման համաձայն, օժանդակող հանձնաժո-



ղովները կարող են կազմվել ընդհանուր կամ պատգամավորական ժողովներում անդամներ ընտրելու միջոցով այնպես, վոր օժանդակող հանձնաժողովն իր կազմից առանձին բաժանմունքի կամ ցեխի համար լիազոր կամ ցեխի ու բաժանմունքի հանձնաժողով կազմի:

6. Ընդհանուր (կամ պատգամավորական) ժողովները մի նպատակ պետք է ունենան, այն է՝ օժանդակող ժողովում այնպիսի ներկայացուցիչներ ընտրել, վորոնք կարող են գործին իրական օգուտ և հանձնաժողովի աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցույց տալ:

Այդ պատճառով ցանկալի յե, վոր հանձնաժողովի կազմի մեջ այնպիսի ներկայացուցիչներ մտնեն, վորոնք փոխառությունների իրացմանը առաջուց մասնակցել և այդ գործում վորոշ ակտիվություն են ցուցաբերել: Նաև այնպիսի ընկերներ, վորոնք շահող վիճակախաղին մասնակցել են վորպես հանձնաժողովի անդամ կամ պատգամավոր. և վերջապես այնպիսի ընկերներ, վորոնք ընդհանրապես հետաքրքրվում են պետ-վարկի և խնայողական դրամարկղի գործերով:

7. Օժանդակող հանձնաժողովներն ընտրվում են մեկ տարի ժամանակով: Օժանդակող հանձնաժողովների վաղաժամ վերընտրությունը կատարվում է 1) բանվորների ու ծառայողների կոմիտեյի պահանջմամբ, 2) գործկոմներին կամ խորհուրդներին կից բարձրագույն օժանդակող հանձնաժողովների պահանջմամբ և վերջապես 3) ձեռնարկության, հիմնարկության և այլ կազմակերպությունների բանվորների ու ծառայողների ընդհանուր կամ պատգամավորական ժողովների վորոշմամբ, ուր նույն յեղանակով էլ կատարվում է հանձնաժողովի այս կամ այն անդամի ժամկետից առաջ հետ կանչելը շնորհիվ իր անգործնեյության: Հանձնաժողովի առանձին անդամի հետ կանչելը թույլատրվում է նաև հենց իրեն օժանդակող հանձնաժողովի վորոշմամբ:

8. Օժանդակող հանձնաժողովի նախագահի վրա յե ընկնում օժանդակող հանձնաժողովի ամբողջ գործի ընդհանուր ղեկավարության պարտականությունը. Նա պետք է անմիջական կենդանի կապ պահպանի բանվորների ու տեղական կոմիտեյի հետ, նաև ձեռնարկության վարչության, ֆինանսական բաժնի, վարկային հիմնարկության, մոտակա խնայողական դրամարկղի և գործկոմներին կամ խորհուրդներին կից օժանդակող հանձնաժողով-

ների հետ։ Բարտուղարի պարտականությունն է ձևակերպել ոժանդակող հանձնաժողովների վորոշումները և ստուգել նրանց կիրառումը։

9․ Աշխատանքն ավելի պարզորոշ տանելու և գործադրության պատասխանատվությունն ուժեղացնելու նպատակով, ոժանդակող հանձնաժողովի ամբողջ աշխատանքը բաժանվում է ստորև բերված հետևյալ ֆունկցիաների, ուր հանձնաժողովի ամեն մի անդամին հանձնարարվում է այս կամ այն ֆունկցիան։

ա) Ագիտացիոն․—Պետ-վարկի և խնայողական գործի կազմակերպումն ու պրոպագանդա—զեկույցների, զրույցների, միտինգների հարց ու պատասխանի յերեկոների միջոցով, նաև պատի թերթերի առանձին հրատարակությունների, գրականության տարածելու միջոցով և այլն։ Վարկային հիմնարկների, խնայողական դրամարկղից ու ֆինանսական բաժիններից ամեն տեսակի ագիտացիոն-ինֆորմացիոն, ոպերատիվ, տեղեկատու բնույթ կրող նյութերի ստանալը։

բ) Խորհրդատու-Տեղեկատու․—Պետ-վարկի և խնայողական գործի վերաբերյալ բոլոր հարցերի մասին խորհուրդներ տալ կազմակերպությանը։ Ակումբներում կամ կարմիր անկյուններում առանձին տեղեկատու սեղաններ սարքելու միջոցով պետփոխառությունների և խնայողական գործի վերաբերյալ ամեն տեսակի տեղեկանքներ տալը և կազմակերպելը։

գ) Միջնորդային․—Սպասարկել՝ կոլեկտիվի անդամներին շահումներն, տոկոսները և մարման գումարներն ստանալու։ Նաև պարտատոմսերը գնելու, ծախելու, գրավ դնելու և պահելու։ Ներգրավել թե նոր ավանդատուների և թե նպաստել հաշվեսության գործարքների զարգացմանը, սերտիֆիկատների տարածմանը և այլն։

դ) Հասարակական․—Հսկողություն կազմակերպել, հետազոտել այն վարկային հիմնարկների ու խնայողական դրամարկղի աշխատանքները, վորոնց կցված են կոլեկտիվները, մրցման հրավիրել առանձին ոժանդակող հանձնաժողովներին, քննել նոր փոխառությունների նախագծերը, աշխատանքի մեթոդները, փոխառությունների իրացման աշխատանքների բարելավումը և նոր ավանդատուների ներգրավման հարցերը։

10․ Այս կամ այն աշխատանքը կազմակերպող կոմիսիայի անդամները մշակում են որացույցային ծրագիր, վորպիսին հաստատվում է ոժանդակող հանձնաժողովների կողմից։ Վերջինս



հանձնաժողովների կես-տարվա ծրագիրներ է մշակում, վորոնք հաստատվում են բանվորների ու ծառայողների ընդհանուր կամ պատգամավորական ժողովի կողմից։ Բացի դրանից, աշխատանքի ծրագիրներն ուղարկվում են գործկոմներին կամ խորհուրդներին կից համաքաղաքային հանձնաժողովներին ի գիտություն։

11․ Աշխատանքի կես տարվա ծրագրի հաստատման հիման վրա ոժանդակող հանձնաժողովներն որացույցային ծրագիր են կազմում յուրաքանչյուր 3 ամսվան համար, հարմարեցնում են այն տեղական պայմաններին ու պետվարկի և խնայողական գործի ընթացիկ խնդիրներին։ Հաստատված ծրագրների աշխատանքները ճիշտ ժամկետներին գործադրելու համար նշանակում են կոնտրոլ և ստուգումն։ Ստուգման գործադրությունը ի կատար է ածվում ա) կուս-կազմակերպությունների բյուրոներում, պրոֆմիութենական մարմիններում պարբերական զեկուցումներ լսելու միջոցով․ բ) վերադաս ոժանդակող հանձնաժողովներում ստորին ցանցի ոժանդակող հանձնաժողովների զեկուցումները լսելու միջոցով։

12․ Ոժանդակող հանձնաժողովի աշխատանքների ընդհանուր ղեկավարությունը ձեռնարկություններում, հիմնարկություններում և կազմակերպություններում պատկանում է գործկոմներին ու պատգամավորների խորհուրդներին, նաև ֆինբաժիններին։

Ոժանդակող հանձնաժողովների հրահանգումների տեխնիկական մասն ի կատար է ածվում այն վարկային հիմնարկի կամ խնայողական դրամարկղի կողմից, վորն սպասարկում է տվյալ կոլեկտիվը պետփոխառությունների ու խնայողական գործի սպասարկում։

13․ Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների ոժանդակող հանձնաժողովներն ընդհանուր պատգամավորական ժողովին հաշիվ են տալիս վոչ ուշ, քան յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ։ Ընդհանուր ժողովում ոժանդակող հանձնաժողովի հաշվետվության համաձայն բանկոմը կամ տեղական կոմիտեն անպայման իր յեզրակացությունն է տալիս։ Ընդհանուր ժողովում զեկուցումն արձանագրվում է։ Արձանագրության պատճեն ուղարկվում է գործկոմներին կամ պատգամավորների խորհրդին կից ոժանդակող հանձնաժողովին։

14․ Ոժանդակող հանձնաժողովներին նոր փոխառությունները իրացնելիս տրամադրվում է վորոշ գումար, վորից կոլեկտիվ կեր—

գով բաժնեգրվածների ընդհանուր գումարի 1/4%-ը տրվում է վորպես կոմիսիոն վարձատրություն: Կոմիսիոն վարձատրությունը կատարում է այն վարկային հիմնարկությունը կամ խնայողական դրամարկղը, վորտեղ կոլեկտիվը բաժնեգրվել է:

Այդ մասնատրության կեսը հանձնաժողովը կարող է ստանալ փոխառության իրացումից հետո, իսկ մյուս կեսը տրվում է այն ժամանակ, յերբ կոլեկտիվը իր պարտատոմսի հաշիվը վերջացնում է, այսինքն յերբ պարտատոմսը հանձնվում է կոլեկտիվին:

15. Մասնատրության հիմնական նշանակությունը կայանում է նրանում, վորպեսզի հանձնաժողովները ի հաշիվ դրանց կարողանան փոխառությունը պահողներին՝ այսինքն կոլեկտիվի անդամներին սպասարկելու մշտական աշխատանքի հետ կապված ծախսերը կատարել (անկյուններ կազմակերպելը, տեղեկատու բաժին սարքելը, նրանց համար ագիտ գրականության ձեռք բերելը և այլն):

— Ի հաշիվ ստացած մասնատրությունների, հանձնաժողովը իրավունք ունի վճարելու այն առանձին անհատներին, վորոնք բաժնեգրման անմիջական տեխնիկական աշխատանքներն են կատարում:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱԳԻՏ-ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

### Ա. Ագիտ աշխատանք.

16. Ագիտացիան ու պրոպագանդան օժանդակող հանձնաժողովի ամենախոշոր ֆունկցիան է կազմում, վորոնց ի կատար ածելը յեռանդուն և սիստեմատիկ աշխատանք է պահանջում: Օժանդակող հանձնաժողովի գործունեության հաջողությունը ամբողջովին կախված է նրանից, թե կոլլեկտիվի անդամների մեջ փոխառությունների ու խնայողական գործի մասսայականացումը ինչ աստիճանի խորն ու բազմակողմանի յե կազմակերպված:

17. Իր ագիտացիոն աշխատանքների մեջ օժանդակող հանձնաժողովը պետ-վարկի և խնայողական գործի մասսայականացման համար պիտի օգտագործի բոլոր միջոցները:

Օժանդակող հանձնաժողովի հիմնական ագիտ-ինֆորմացիոն աշխատանքը կարելի յե բաժանել՝



ա) բանավոր ագիտացիայի.

բ) ագիտացիա պատի լրագրի միջոցով.

գ) տեսողական ագիտացիա.

դ) փոխառությունների ու խնայողական դրամարկղների անկյունների կազմակերպում:

18. Օժանդակող հանձնաժողովի կողմից բանավոր ագիտացիան անց է կացվում մի շարք զեկուցումների, զրույցների, ռեֆերատների, միտինգների, պետ-փոխառությունների խնայողական գործի վերաբերյալ կազմած հարց ու պատասխանի յերեկոների միջոցով:

Սրանց մանրամասն ծրագիրը պետք է նախորոք մշակված և անցկացրված լինի օժանդակող հանձնաժողովի աշխատանքների ծրագրի մեջ: (Տես § 10–11): Օժանդակող հանձնաժողովների ծրագրերը ավելի կենդանի դարձնելու համար, համաձայնեցրված պիտի լինի բանվորների կուլտ-կոմիսիաների կամ բանվոր-ծառայողների տեղական կոմիտեների ու Համամիութենական ԿԿ (բ) տեղական բջիջների ագիտացիոն խմբակների հետ: Ինչ վերաբերում է զեկուցողներին, այդպիսիներին ընտրում է Համամիութենական ԿԿ (բ) բջիջը, Ֆինբաժինը, վարկային հիմնարկությունները, խնայողական դրամարկղները, տեղկոմը:

19. Առանձին ուշադրություն պետք է դարձնել պատի թերթի օգտագործմանը: Օժանդակող հանձնաժողովները բանվորների ու տեղական կոմիտեների առաջ պետք է ամեն ճիգ ու ջանք թափեն, վորպեսզի պատի թերթում պետ-փոխառությունների ու խնայողական դրամարկղների հարցերի վերաբերյալ մշտական հատուկ տեղ հատկացվի: Ցանկալի յե, վոր խմբագրական կոլլեգիայի կազմի մեջ օժանդակող հանձնաժողովի ներկայացուցիչը անցնի: Պատի թերթում օժանդակող հանձնաժողովը կարող է պարզաբանել վոչ թե միայն տվյալ ձեռնարկությանը վերաբերող նյութերն ու փաստերը, այլ ընդհանրապես պետ-փոխառությանը և խնայողական դրամարկղի վերաբերյալ խնդիրները:

20. Տեսողական ագիտացիային են պատկանում պետ-վարկի և խնայողական գործի վերաբերյալ կինո-ֆիլմների, դիապոզիտիվների ցուցադրությունը, ձեռնարկությունների պատերին պլակատներ, լոզունգներ, հայտարարություններ փակցնելը և այլն: Պարզ է, վոր հատուկ ֆիլմների ցուցադրման համար, օժանդակող հանձնաժողովները պետք է անպայման համաձայնության գան

պատգամավորական խորհրդի և գործկոմներին կից օժանդակող հանձնաժողովների ու ֆին-բաժինների հետ, վորոնք մեծապես աջակցում են ստորին ցանցի օժանդակող հանձնաժողովների ծրագրած ձեռնարկումների իրականացմանը:

21. Առանձին ուշադրություն պետք է դարձնել փոխատվությունների ու խնայողական դրամարկղների անկյան կազմակերպմանը, վորտեղ հանձնաժողովի անդամներից հերթապահություն է նշանակվում և վորտեղ կենտրոնանում են օժանդակող հանձնաժողովի մշտական աշխատանքները:

22. Փոխատվությունների և խնայողական դրամարկղների անկյունը պետք է կազմակերպվի կամ ակումբներում, կամ ձեռնարկներում նրան փոխարինող «կարմիր անկյուններում»: Անկյան մեջ տեղեկատու սեղանին առանձին տեղ է հատկացվում (տես § 26): Փոխատվություններին ու խնայողական դրամարկղներին վերաբերյալ բոլոր անհրաժեշտ ագիտ-ինֆորմացիոն և այլ նյութերը անկյան համար օժանդակող հանձնաժողովները ստանում են ֆին. բաժնից, վարկային հիմնարկությունից և խնայողական դրամարկղից:

23. Շատ ցանկալի յե, վոր փոխատվությունների ու խնայողական դրամարկղների անկյուններում այս կամ այն հարցի ուսումնասիրության խմբակներ կազմակերպվեն, որինակ պետ-վարկի ուսումնասիրության խմբակ, խնայողական գործի ուսումնասիրության խմբակ և այլն: Յերիտասարդության ու կանանց փոխատվություններին խնայողական գործի մեջ քաշելու խմբակներ և այլն: Օժանդակող հանձնաժողովները խնայողության և պետ-վարկի հարցերի շուրջը յերիտասարդական ու կանանց կազմակերպությունների հետ միասին դիսկուսիոն յերեկոներ և դիտումներ են կազմակերպում: Սրա հետ միասին նպատակահարմար է անկյուններում կոլլեկտիվ նպատակային կուտակումներ կազմակերպել ոպորտի ինվենտար գնելու, տուրիզմի նպատակների համար և այլն:

24. Օժանդակող հանձնաժողովները ձեռնարկություններում կամպանիաների նախապատրաստական աշխատանքներին անցկացներում մասնակցություն են ցույց տալիս. նույն յեղանակով մասնակցում են խորհուրդների վերընտրություններին, ոգտագործելով այդ կամպանիաները պետ-վարկի և խնայողական գործի վերաբերյալ ագիտացիա մղելու: Միջոցներ են ձեռք առնում խորհրդի նորընտիր պատգամավորների նակազի մեջ մտցնելու պետ-վարկի ու խնայողական դրամարկղի գործի բարելավման և նրանց աշխատավորության մատչելի դարձնելու վերաբերյալ իրական առաջադրություններ:

## Բ. խորհրդատու և (Տեղական) տեղեկատու աշխատանքներ.

25. Խորհրդատու-տեղեկատու աշխատանքների բնագավառում օժանդակող հանձնաժողովի խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի ձեռնարկություններում, հիմնարկություններում և կազմակերպություններում պետ-վարկի և խնայողական գործի հարցերի վերաբերյալ տեղեկություններ ու խորհուրդներ կազմակերպի:

26. Խորհրդատու-տեղեկատու աշխատանքի կազմակերպման համար օժանդակող հանձնաժողովները փոխատվությունների ու խնայողական դրամարկղների անկյունում տեղեկատու սեղան են կազմում, վորտեղ պետք է կենտրոնացված լինեն պետ-վարկի և խնայողական դրամարկղի համար տեղեկատու, բացատրական և ինֆորմացիոն նյութերը, վորոնք օժանդակող հանձնաժողովները ստանում են ֆին-բաժնում, տվյալ կոլլեկտիվին սպասարկող խնայողական դրամարկղից ու վարկային հիմնարկությունից:

27. Օժանդակող հանձնաժողովը առանձին որեր ու ժամեր է նշանակում կոլլեկտիվի բոլոր անդամներին հետաքրքրող հարցերի շուրջը, պետ-վարկի և խնայողական դրամարկղի ասպարեզում տեղեկություններ ու խորհուրդներ տալու համար:

Այդ մասին լայն կերպով հայտարարում են ձեռնարկությունների, հիմնարկությունների ու կազմակերպությունների աշխատավորներին պատի թերթերի, անշլագների միջոցով հայտարարում են ընդհանուր պատգամավորական և ուրիշ ժողովներում և այլն:

28. Օժանդակող հանձնաժողովները տեղեկատու գործի կանոնավոր և անարգել սպասարկման համար պետ-վարկի և խնայողական գործի ասպարեզում օժանդակող հանձնաժողովների անդամների ու մյուս ակտիվ աշխատավորների մեջ հերթապահության ցուցակ են կազմում: Մի ամիս առաջ պատրաստված այդ ցուցակները ստորագրված օժանդակող հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից փակցնում են աչքի

ընկնող տեղերում և ըստ հնարավորության հայտարարում են պատի թերթերում:

29. Օժանդակող հանձնաժողովի և այլ ակտիվ աշխատավորների այն բոլոր անդամները, վորոնք ընտրված են հերթապահության համար, պետք է այնքան պատրաստված լինեն, վոր կարողանան պետ-վարկի և խնայողական գործի վերաբերյալ ամեն տեսակի տեղեկություններ և խորհուրդներ տալ: Դրա համար նրանք պետք է ամենայն ուշադրությամբ հանձնաժողովում յեղած ամեն տեսակի տեղեկությունների, ինֆորմացիաների և ագիտացիոն նյութերի հետ ծանոթանան: Բացի դրանից անհրաժեշտ է, վոր տեղական ֆին-բաժնի ներկայացուցիչը հանձնաժողովների անդամների ու ակտիվ աշխատավորների հետ մի քանի փորձնական պարապմունքներ կատարի, վորպեսզի հերթապահները այդ պարապմունքների միջոցով կարողանան տեղեկություններ տալուն սովորեն (համեմատել պարտատոմսերի համարները շահումների աղյուսակների հետ, բացատրել թե ինչպես պահ տալ, փոխատվության ստանալ, վորոշել պարտատոմսի վաճառումը, ինչպես մուծել և ստանալ ավանդները, ինչ բան է ժիրո գործարքը, ինչպիսին են փոխառությունների պայմանները, ինչով է մի փոխառությունը մյուսից տարբերվում և այլն):

30. Օժանդակող հանձնաժողովները խնայողական գործին վերաբերյալ հարցերի մասին տեղեկություններ են տալիս թե ինչ տիպի խնայողական դրամարկղներ կան, այս կամ այն խնայողական դրամարկղի գործարքները ինչպիսի շրջանակի մեջ են կատարվում, վորտեղ են գտնվում մոտակա խնայողական դրամարկղները, պահ տրված դրամները ինչպես մուծել և հետ ստանալ, ինչպես փոխադրություններ կատարել, ակկրեդիտիվներից օգտվել հարկերի և այլ վճարումների ժամանակ, ինչպես օգտվել խնայողական դրամարկղներից, ինչպես ժիրո-գործարքներ կատարել և վերջապես տեղեկանքներ տալ այն մասին, թե ինչպիսի արտոնություններ ու օգուտներ են տալիս խնայողական դամարկղները (պահ տրված դրամների գաղտնությունը, դրամագլխի և յեկամուտների անձեռնմխելիությունը, տարվա միջին հիմնական դրամագլխին ձեռք չտալով հանդերձ, ինչպես տոկոսներ ստանալ) դրամը պահ տվողի մահից հետո ինչպես հետ ստանալ, կտակների մասին յեղած կարգադրությունները և այլն:

31. Տեղեկություններ տալու աշխատանքին ձեռնամուխ լինելով, օժանդակող հանձնաժողովները պետք է հետևյալ նյութերն ունենան՝ ա) պետ-փոխառությունների վիճակահանությունների (աղյուսակը) ցուցակը, բ) շահող փոխառությունների աղյուսակը, տեղեկություններ կտրոնների վճարման ժամկետների մասին, գ) պետ-փոխառությունների և խնայողական դրամարկղների վերաբերյալ հիմնական վիճակագրական աղյուսակներ, մատչելի՝ պոպուլյար գրականություն, պլակատներ, լոզունգներ պետ-փոխառությունների ու խնայողական դրամարկղների մասին և այլն, դ) մասսայական փոխառությունների հիմնական պայմանները, ե) սերտիֆիկատների վաճառքն ու յեկամուտը նաև ավանդների ու ավանդատուների աճման աղյուսակը և այլն:

32. Նոր-փոխառությունների իրացման ժամանակ, տեղեկատուբաժինները պետք է բոլոր ագիտացիոն, ինֆորմացիոն և այլ նյութերը ունենան, վոչ թե միայն այս կամ այն տեղեկությունը տալու, այլև տվյալ կոլլեկտիվի ցանկացող անդամներին բաժանելու:

33. Օժանդակող հանձնաժողովները տեղեկություններ տալը այնպիսի ձևով պետք է կազմակերպեն, վոր պարզ ու թեթև տեղեկությունները փոխառությունների ու խնայողական դրամարկղների անկյան հաճախորդները առանց հերթապահի օժանդակության իրենք իրենց ստանալ կարողանան: Դրա համար էլ մանավորապես անհրաժեշտ է ունենալ փոխառությունների-փոխատվությունների գործարքների պայմանների մասին գրված թերթեր, ինֆորմացիոն պլակատներ և այլն:

## IV. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ-ԿՈՆՏՐՈԼ.

34. Օժանդակող հանձնաժողովի խնդիրների մեջ են մտնում վոչ թե միայն ագիտացիայով, տեղեկություններով ու խորհուրդներով միայն աշխատավորներին անմիջապես սպասարկելը, և այլն, այլև աջակցել, վոր ֆին-բաժիններում, վարկային հիմնարկներում ու խնայողական դրամարկղներում, պետ-փոխառությունների ու խնայողական գործի վերաբերյալ աշխատանքները լավ հիմքերի վրա դրվի: Բացի դրանից օժանդակող հանձնաժողովները մրցման միջոցով պետք է ֆինհիմնարկների աշխատանքները թեթևացնեն ինչպես պետ-փոխառությունների իրացման համար խնայողական դրամարկղի ամեն տարվա յերկշաբաթյակի կամպանիան անց-

կացնելու ժամանակ, այնպես էլ, յերբ իրացումը չի կատարվում, կամ խնայողական դրամարկղների կամպանիան չի տարվում:

35. Ուժանդակող հանձնաժողովները ժամանակ առ ժամանակ իրենց միջից առանձին բրիգադաներ են ջոկում, վորպեսզի կարողանան քննել այն վարկային հիմնարկության կամ խնայողական դրամարկղի աշխատանքները, վորին միացված է տվյալ կոլեկտիվը: Բրիգադայի խնդիրների մեջ է մտնում ա) վարկային հիմնարկության կամ խնայողական դրամարկղի ֆոնդային աշխատանքի քննությունը, թե վորպիսի ռացիոնալ ձևով է սպասարկում վարկային հիմնարկությունը հաճախորդներին. բ) ինչպես է ապարատի վերաբերմունքը դեպի ֆոնդային աշխատանքը, ոգտագործե՞լ է արդյոք վարկային հիմնարկությունը իր աշխատանքը զարգացնելու հնարավորությունները, արդյոք հայտնաբերո՞ւմ է ձեռնեցություն և այլն. գ) հետազոտել, թե ինչ չափով է տվյալ հիմնարկությունը վերադաս կազմակերպության դիրեկտիվները կատարել, դ) ամբողջ խնայողական դրամարկղի քննությունը հաճախորդներին սպասարկելու տեսակետից և այլն, ե) ստուգման յենթարկել ձեռնարկությունների խնայողական դրամարկղերի և վարկային հիմնարկությունների ներկայացուցիչների աշխատանքները:

36. Բացի վարկային հիմնարկության ու խնայողական դրամարկղի հասարակական այն հետազոտությունից, վորին ամրացված է կոլեկտիվը, ուժանդակող հանձնաժողովը կարող է ուրիշ հանձնաժողովների համաձայնությամբ այլ վարկային հիմնարկների, խնայողական դրամարկղների ու ֆին բաժինների աշխատանքները քննել: Կատարված փորձերը փոխանակելու նպատակով զանազան հանձնաժողովները միասին են խորհրդակցություն կատարում:

37. Այն ձեռնարկությունների հանձնաժողովները, վորոնց սպասարկման աշխատանքներն որինակելի յե տարված, կարող են ընդունել այն ուժանդակող հանձնաժողովի շեֆությունը, վորոնց աշխատանքները չեն կազմակերպված և կաղում են: Մասնավորապես շատ ցանկալի յե, վոր խոշոր ձեռնարկությունների ու գործարանների ուժանդակող հանձնաժողովներն ընդունեյին մեկ կամ մի քանի գյուղխորհուրդներին կից ուժանդակող հանձնաժողովների շեֆությունը: Շեֆության ընդունելը վոչ թե միայն նպատակ ունի ինչպես հարկն է աշխատանքների կազմակերպությանը զարկ տալ այն հանձնաժողովներում, վորտեղ նա անբավարար է տարված, այլ վորպեսզի գյուղական հանձնաժողովների նկատմամբ իրակա-



նացվի աշխատավոր գյուղացիության ու բանվոր դասակարգի մերձեցումը՝ վերջինիս ոգնությամբ:

38. Հասարակական կոնտրոլի կազմակերպությանն է վերաբերում նաև մրցակցության կազմակերպությունը:

Մրցակցությունը կարող է տեղի ունենալ ինչպես տվյալ ձեռնարկության, հիմնարկության և կազմակերպության, այնպես էլ առանձին կազմակերպությունների, ձեռնարկությունների ու հիմնարկությունների միջև:

39. Ձեռնարկության, հիմնարկության կազմակերպության մեջ մրցակցություն կարող է առաջ գալ բաժինների, ցեխերի ու այլ կազմակերպչական ստորաբաժանումների մեջ: Ինչպես փոխառությունների իրացման մեջ, այնպես էլ այն ժամանակամիջոցում, յերբ այդպիսիները չկան: Իրացման շրջանում ձեռնարկության մեջ մրցակցության նպատակը կարող է լինել ա) փոխառությունների ամենալայն ընդգրկումը տվյալ համքարության (цех) կամ բաժանմունքի աշխատավորների կողմից, բ) ամենամեծ չափով բաժնեգրվածների ներգրավումը. իրացումից դուրս յեղած ժամանակամիջոցում ձեռնարկության մեջ մրցակցության նպատակն է ա) պարտատոմսերի 100 տոկոսային ստուգումը շահումների աղյուսակներով, բ) կոլեկտիվորեն պահ տալը և այլն. գ) տեղեկատու գործը ամենալավ հիմքերի վրա դնելը, դ) ձեռնարկությունների խնայդրամարկղների ու վարկային հիմնարկությունների ներկայացուցիչների բարձր վորակի աշխատանքը: Նման ձևով խնայողական յերկշաբաթորյակի կամպանիան անցկացնելու մրցակցության նպատակը կարող է լինել ա) ձեռնարկությունների ու հիմնարկությունների բանվորների ու ծառայողների միջից խնայողական դրամարկղի մեծ թվով ավանդատուներ ճարելը. բ) նոր ավանդների ընդունելության տեսակետից խնայողական դրամարկղը լավ հիմքերի վրա դնելն ու ավանդատուներին ճիշտ ու լայն սպասարկումը:

—Յերկշաբաթորյակը անցկացնելու շրջանից հետո մրցակցության նպատակը լինելու յե ա) գործարքային տեխնիկայի առավել պարզեցումը, բ) յուրաքանչյուր հաճախորդին արագ սպասարկելու ձևերը. գ) հաշվետվությունը առողջ հիմքերի վրա դնելը և դ) անհատական համակրողներին խնայողական դրամարկղի հետ կապելը:

40. Առանձին ձեռնարկությունների, հիմնարկությունների և կազմակերպությունների մեջ մրցակցությունը կարող է կատար-

վել նույն յեղանակով, ինչպես վոր ձեռնարկության մեջ, միայն այն տարբերությամբ, վոր վերջին դեպքում մրցակցության հրավերը կատարվում է թերթերի, կոնֆերենցիաների միջոցով և այլն:

Փոխառությունների ոպերատիվ աշխատանքները.—պետ-փոխառությունների պահողների սպասարկումը.

41. Փոխառության տարածման գործը ավարտելուց հետո ոժանդակող հանձնաժողովների գլխավոր խնդիրը կազմում է բանվորներին ու ծառայողներին տեղերում ճիշտ ու անարգել սպասարկման գործի կազմակերպումը:

—Ոժանդակող հանձնաժողովները պետք է իրենց ամբողջ ուժերը լարեն, վորպեսզի կոլեկտիվներում կոլեկտիվ բաժնեգրության արդյունքները ամրացնել կարողանան:

—Այդ բանը կարելի յե մի կողմից ընդարձակ բացատրական աշխատանքի միջոցով կատարել, նպատակ դնելով, վոր յուրաքանչյուր բաժնեգրվող իր պարտատոմսերը անպայման իր մոտ պահի. մյուս կողմից փոխառությունների պահողների կարիքները լավ սպասարկելու կազմակերպության միջոցով: —Ոժանդակող հանձնաժողովները իրենց վրա յեն վերցնում Փոնդային գործարքներին սպասարկելու նախաձեռնությունը, մասնավորապես պարտատոմսերի կազմակերպությունը, կոլեկտիվներին կառավարելու իրավունքով պահ տալը: Նաև վարկային հիմնարկությունների կամ խնայողական դրամարկղների ներկայացուցիչների միջոցով անմիջապես ձեռնարկության կամ հիմնարկության մեջ փոխառությունների պահողներին ամեն տեսակի գործարքներով սպասարկելը:

42. Պետք է ոժանդակող հանձնաժողովների հոգողությամբ և ղեկավարությամբ փոխառության գործը այնպես կազմակերպել, վոր պարտատոմսեր պահողների Փոնդային սպասարկումները նրանց աշխատանքի տեղերում կատարվեն:

—Բանվորների ու ծառայողների կոլեկտիվներին սպասարկելը կատարվում է այն բանկի կամ խնայողական դրամարկղի կողմից, վորը իր ձեռնարկության ներկայացուցչի միջոցով տվյալ կոլեկտիվի գրանցումն է ձևակերպել: Ձեռնարկություններում ու հիմնարկություններում բանկի կամ խնայողական դրամարկղի ներկայացուցչի թեկնածությունը դրվում է վարչության ցուցմունքով ոժանդակող հանձնաժողովի համաձայնությամբ: Հանձնա-



ժողովը բանկի կամ խնայդրամարկղի ներկայացուցչին ամեն տեսակի աջակցություն ցույց է տալիս: Մյուս կողմից ոժանդակող հանձնաժողովը ստուգում է վարկային հիմնարկության կամ խնայողական դրամարկղի ներկայացուցչի աշխատանքները կամ հետևում նրա ամենօրյա աշխատանքներին և կամ նրա աշխատանքների մասին զեկուցումներ է լսում: Ոժանդակող հանձնաժողովը բոլոր դեպքերում իրավասու յե խնդրել վարկային հիմնարկությանը կամ խնայողական դրամարկղին, վոր նա իր ներկայացուցիչը փոխարինի ուրիշով:

43. Վարկային հիմնարկության ներկայացուցիչը կոլեկտիվի անդամներից ընդունում է հանձնարարություններ կատարելու Փոնդային բոլոր գործարքները (պարտատոմսերի վաճառելը, շահումը, տոկոսային յեկամուտ ստանալը և այլն). վարկային հիմնարկության ներկայացուցիչը ստացած հանձնարարությունները ի կատար է ածում վոչ ուշ քան հաջորդ որը:

44. Վորպեսզի բանվորների ու ծառայողների մոտ թողած պարտատոմսերը չփչանան (չկորչեն, չգողացվեն և այլն) և վորպեսզի փոխառությունների պահողներին ամբողջապես սպասարկել կարողանան, ոժանդակող հանձնաժողովը իր կոլեկտիվի անդամների մեջ աղիտացիա է տանում, վոր նրանք իրենց պարտատոմսերը կառավարելու իրավունքով պահ տան վարկային հիմնարկությանը կամ խնայողական դրամարկղին: Պահ տրված փոխատվության գործառնությունից ոգտվող փոխառություն ունեցողն իր պարտատոմսը պահում է բանկում կամ խնայողական դրամարկղում, վորոնք ձրիաբար կատարում են պարտատոմսերին վերաբերող բոլոր գործարքները (հետևվում են կտրոնների ժամկետներին, ստուգում են շահումները և համեմատում աղյուսակների հետ, ստանում են շահումները, խաղարկության դրամագլուխը և այլն): Պահ տրված փոխատվության վկայականով, վորպիսին տրվում է հանձնորդին պարտատոմսը պահ տալու միջոցին կարող է փոխատվություն ստանալ դրավ դրած պարտատոմսի դիմաց: Այսպիսով պահ տված փոխատվությունը իր մեջ ամփոփում է արժեթղթերի՝ պահ տալու և փոխատվության 2 գործարքներ:

45. Պահ տալու և փոխատվության գործառնությունը գործադրվում է այն դեպքում, յերբ բանվորներն ու ծառայողներն կոլեկտիվ բաժնեգրման միջոցով ձեռք բերած պարտատոմսը կոլեկտիվ կերպով տալիս են պահ կառավարելու իրավունքով այն վարկային

909
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Публичная Биб
12636-57

հիմնարկությանը, վորը ձևակերպել է կոլլեկտիվ բաժնեգրությունը:

— Պարտատոմսերը կոլլեկտիվ կերպով պահ տալու գործողությունը կատարվում է հետևյալ հիմունքներով: Պարտատոմսերի կոլլեկտիվ կերպով պահ տալը բոլորովին նպատակ չունի հասարակական կոնտրոլի յենթարկել կոլլեկտիվի անդամների ունեցած պարտատոմսերը: Վարկային (ընկերությունը), հիմնարկությունը կոլլեկտիվի յուրաքանչյուր անդամին տալիս է անհատական պահ տրված փոխառության վկայական:

Հետագայում պարտատոմսեր ունեցողները առանց կոլլեկտիվի մասնակցության, կարող են վարկային հիմնարկության հետ անմիջական հարաբերության մեջ մտնել: Այս հիմնական պայմանները պետք է մանրամասն բացատրել կոլլեկտիվի անդամներին:

Ոժանդակող հանձնաժողովի կողմից պարտատոմսերը պահ տալը կատարվում է բոլորովին կամավոր կերպով:

46. Պարտատոմսերը կառավարելու իրավունքով պահ տալը ոժանդակող հանձնաժողովի կողմից պետք է կոլլեկտիվի անդամների ընդհանուր ժողովում քննության առնվի: Այդ քննությունը պետք է հատուկ զեկուցումով կատարվի, վորտեղ մանրամասն բացատրվելու յեն պահ տրված փոխառության գործարքների նշանակության և ոգուտների մասին, նաև այն առավելությունների մասին պահողների նկատմամբ, վորոնք կապված են նրա ոգտագործման հետ: Ընդհանուր ժողովը քննության է դնում այդ վորոշումը. տվյալ կոլլեկտիվի բոլոր անդամներին հորդորում է իրենց պարտատոմսերը պահ տալու: Սակայն ժողովը չի կարող վորոշում հանել, վոր կոլլեկտիվին մասնակցողները անպատճառ այդ ընդունեն:

47. Ժողովից հետո ոժանդակող հանձնաժողովը շրջում է կոլլեկտիվի անդամների մեջ և հայտնում, թե ով է իր պարտատոմսերը կառավարելու իրավունքով պահ տալ ցանկանում: Հարցումների ժամանակ այն բաժնեգրվողները, վորոնք իրենց պարտատոմսերը պահ են տալիս, սահմանված ձև ունեցող հայտարարության թերթիկներ են լրացնում: Այդ հայտարարությունները կենտրոնանում են վարչության մոտ, վորը իր կողմից հանձնում է այն բանկին կամ խնայողական դրամարկղին, վորտեղ տվյալ կոլլեկտիվը փոխառություններ ստանալու համար ցուցակագրված է: Այնուհետև բանկը կամ խնայողական դրամարկղը կոլլեկտիվի յուրաքանչյուր անդամի համար պատրաստում է անհատական—անվանական պահ տալու և փոխառության վկայական այն հայտարարության հիման վրա, վորպիսիները ստացել է նա վարչությունից:



48. Կոլլեկտիվ ցուցակագրման վերջին մուծումն անելիս բանկը կամ խնայողական դրամարկղը այդ վկայականները հանձնում է վարչությանը: Վերջինս ստանալով այդ պահ տալու փոխառությունների վկայականները, իր դրամարկղի ապարատի միջոցով կազմակերպում է վկայականների բաժանումն իրենց տերերին, մասնակից անելով այդ գործին նաև ոժանդակող հանձնաժողովին: Այդ վկայականները վոչ մի դեպքում չպետք է ուշացվի վարչության կամ ոժանդակող հանձնաժողովի կողմից: Բաժանումը պետք է կատարվի վոչ ուշ, քան բանկից կամ խնայողական դրամարկղից ստանալու հաջորդ որը:

49. Հետագայում պահ տալու փոխառության վկայականներ ունեցողները կարող են իրենց պարտատոմսերը ամբողջովին կամ մի մասը գրավ դնել, կամ ստանալ և կամ թե ընդհանրապես, ըստ իրենց ցանկության վարվել: Պահ տրված փոխառության վկայականը ներկայացնողին բանկը կամ խնայողական դրամարկղը ավանդատուին տալիս է նրա շահող պարտատոմսը, կտրոնների տոկոսները և փոխառության պահ տված պարտատոմսերը:

Փոխառությունը տրվում է ցանկացած գումարով, միայն ստացածի ընդհանուր գումարը չպետք է պարտատոմսի իսկական (նոմինալ) արժեքի 60%-ից անցնի:

Փոխառությունները կարելի յե միանգամից կամ մաս-մաս մարել: Ստացած շահող պարտատոմսերի մասին բանկը կամ խնայողական դրամարկղը հայտնում է ավանդատուին: Պահ տրված պարտատոմսերի գործառնությունները կատարում է ավանդատուն, վորի համար դիմում է տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության, բանկի կամ խնայողական դրամարկղի ներկայացուցչին:

50. Հիշյալ խնդիրների վերաբերմամբ ոժանդակող հանձնաժողովների կոնկրետ, փորձնական միջոցները կայանում է հետևյալում.—

ա. ոժանդակող հանձնաժողովները միացվում են—այն ֆինմասերին, վորոնցից պարտատոմսերը կոլլեկտիվ կերպով

հանձնելու կամպանիայի կարգի և միջնորդային ֆունկցիաների կազմակերպության մասին անհրաժեշտ ցուցմունքներ են ստանում:

բ. Օժանդակող հանձնաժողովները ընդհանուր ժողովում հատուկ զեկուցում են տալիս պահ տալու փոխառության գործարքների, նրա պայմանների, անց-կացնելու կարգի և պարտատոմսեր պահողներին տրվելիք օգուտների մասին:

Օժանդակող հանձնաժողովները զեկուցողի նկատմամբ համաձայնության են գալիս ֆին բաժնի հետ:

գ. Օժանդակող հանձնաժողովները վարկային հիմնարկությունից ստանում են փոխառության ձևակերպման և պարտատոմսերը պահ տալու հայտարարությունների թերթիկներ. ընդհանուր ժողովը վերջանալուց հետո, անխտիր բոլոր բաժնեգրվողների համար հարցեր են պատրաստում, թե ով է ցանկանում պարտատոմսերը կառավարելու իրավունքով պահ տալ:

դ. Օժանդակող հանձնաժողովը պետք է բաժնեգրվողների թերթիկները հավաքի: Օժանդակող հանձնաժողովները այդ հայտարարությունները հանձնում են ձեռնարկության կամ հիմնարկության վարչություններին, վորոնք իրենց կողմից ամրացված կտրոնների արժեքները նրանց միացնելով հանձնում են վարկային հիմարկությանը պահ տալու փոխառության գործարքը ձևակերպելու համար:

յե. Պահ տալու փոխառության վկայականները վարչությունը հանձնում է ավանդատուներին օժանդակող հանձնաժողովների անմիջական հսկողության տակ:

զ. Օժանդակող հանձնաժողովների ֆունկցիաների նկատմամբ գործադրում են հասարակական կոնտրոլը ճիշտ և կանոնավոր անցկացնելու այն, չխառնվելով բանկի կամ խնայողական դրամարկղի ներկայացուցչի գործարքային աշխատանքներին:

է. Յեթե օժանդակող հանձնաժողովները պարտատոմսեր պահողների սպասարկման գործում վորևէ պակասություն են հայտնաբերում, նրանք վարկային հիմնարկության համաձայնությամբ միջոցներ են ձեռք առնում այդ թերությունները վերացնել. յեթե այդ չի հաջողվում, ապա վիճելի հարցերի լուծումը հանձնում են համապատասխան ֆինմարմիններին:

## V. ԿՈԼԼԵԿՏԻՎ ԲԱԺՆԵԳՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

51. Պետական նոր փոխառություններ բաց թողնելու ժամանակ, հանձնաժողովի առաջ դրվում է տվյալ ձեռնարկության



կամ հիմնարկության բոլոր բանվորների ու ծառայողների մեջ փոխառության կոլլեկտիվ բաժնեգրումը կազմակերպելու, նրան անցկացնելու պատասխանատու խնդիրը:

— Կոլլեկտիվ բաժնեգրության կազմակերպումը խիստ մեծ և բարդ աշխատանք է պահանջում, վորովհետև օժանդակող հանձնաժողովները միմիայն իրենց ուժերով չպետք է տանեն և տանել էլ չեն կարող:

52. Կոլլեկտիվ բաժնեգրությունն անցկացնելու բոլոր փորձնական միջոցներն ի կատար ածելու համար օժանդակող հանձնաժողովները պետք է պրոֆպատգամավորներին, պրոֆլիազորներին, ձեռնարկության մեջ աշխատող խորհրդի անդամներին ու ակտիվ աշխատողներին իրենց գործին մասնակից դարձնեն:

53. Անհրաժեշտ է, վոր գործին մասնակցող ընկերներից յուրաքանչյուրը փոխառությունների իրացման նկատմամբ լավ ըմբռնի փոխառության պայմանները, կոլլեկտիվ բաժնեգրման անցկացնելը, այն հատուկ արտոնությունները, վորոնք սահմանված են բանվորների ու ծառայողների համար: Այդ պատճառով օժանդակող հանձնաժողովները պետք է բավականին լուրջ ուշադրություն դարձնեն գործի մեջ քաշված աշխատակիցների հրահանգմանը: Նրա հետ պետք է նախապատրաստական զրույցներ և պարապմունքներ տանեն: Հրահանգման հետ միասին աշխատավորները ստանում են բաժնեգրման թերթեր և փոխառությունների մասին համապատասխան ագիտացիոն նյութեր:

54. Օժանդակող հանձնաժողովների գործունեությունը փոխառություններ տարածելու գործում շարունակվում է կոլլեկտիվ բաժնեգրությունը անցկացնելու ամբողջ շրջանում և կայանում է՝

ա) Կոլլեկտիվի անդամների մեջ փոխառության մասին ագիտացիոն ինֆորմացիոն աշխատանք անց-կացնելու մեջ, բ) կոլլեկտիվի բոլոր անդամներին կոլլեկտիվորեն բաժնեգրելու կազմակերպության մեջ, գ) հաշվետու աշխատանքների մեջ:

55. Փոխառությունները տարածելու փորձնական խնդիրներին են վերաբերում՝

ա) Իր կոլլեկտիվում փոխառության բաժնեգրման կամպանիան անց-կացնելու օրացուցային պլանի մշակումը.

բ) Կոլլեկտիվի անդամների մեջ լայն բացատրական կամպանիա տանելը, թե ինչ խնդիրներ ու նպատակներ ունի փոխառությունը և ինչպիսի պարտատոմսեր գնելու պայմանները:

գ) Փոխառությանը նվիրված զրույցներ և զեկուցումներ կազմակերպելը. իր ժամանակին դասախոս հրավիրելու ապահովումը:

դ) Փոխառությունների վերաբերյալ նյութերի դասավորումը (պլակատներ, թերթեր, լոզունգներ, գրքույկներ և այլն):

ե) Փոխառության և նրա իրացման մասին պատի թերթում, անկյունում, պետ-փոխառությունների տեղեկատու բաժնում կոլեկտիվի անդամների համար կանոնավոր ինֆորմացիա կազմակերպելը և այլն:

զ) Կոլեկտիվ բաժնեգրության կազմակերպումը, մանավորապես կոլեկտիվի անդամներին հարցումների միջոցով փոխառությանը անդամագրվելու լոզունգներ ջոկելը:

Լիազորներին բաժնեգրության հայտարարությունների թերթեր տալն ու նրանց բաժնեգրության թերթերը լրացնելու կանոնների մասին հրահանգելը. ադմինիստրացիայի կողմից կոլեկտիվ բաժնեգրման մուծումներին հետևելը, կոլեկտիվ բաժնեգրվող անդամների մուծումները ժամանակին վարկային հիմնարկության հանձնելուն հետևելը և իր ժամանակին ադմինիստրացիայի կողմից պարտատոմսերի համարները ամրացված կտրոններով բաժանելը:

է) Ֆին-օրգանների հետ կենդանի կապ պահպանելը. փոխառությունները իրացնելու կարգի մասին հրահանգչական ցուցումներ, ամեն տեսակի ագիտացիոն և ինֆորմացիոն նյութեր և ցուցակագրման թերթեր ստանալը:

56. Վերոհիշյալ 55 կետերում ցույց տրված փորձնական խնդիրների ու միջոցների ցանկը օժանդակող հանձնաժողովները իրենց փոխառությունների իրացման աշխատանքների հիմք են ընդունում. գործադրում են նաև ուրիշ այնպիսի միջոցներ, որոնք բաժնեգրության հաջող իրացման համար նպատակահարմար են գտնում:

57. Օժանդակող հանձնաժողովները փոխառության իրացումը սկսում են ագիտացիոն բացատրական աշխատանքներով:

—Հերթական կամ հատուկ հրավիրված ընդհանուր ժողովում, հանձնաժողովը զեկուցում է տալիս նոր փոխառության, նրա ժողովրդական տնտեսության համար ունեցած նշանակության և կոլեկտիվ բաժնեգրման պայմանների մասին: —Այդպիսի զեկուցում կարելի յե կամ իրենց ուժերով տալ, կամ առանձին հրավիրված զեկուցողի միջոցով, որը պետք է Ֆինբաժնից հրավիրված լինի իր ժամանակին՝ ժողովը գումարելուց 2 օր առաջ:



58. Հանձնաժողովը կազմակերպում է ֆին-բաժնից փոխառության վերաբերյալ ագիտացիոն և ինֆորմացիոն գրականություն ստանալու գործը, հոգ է տանում, որ այդ գրականությունը ինչպես հարկն է օգտագործվի: Պլակատները, հայտարարությունները, լոզունգները պետք է աչքի ընկնող տեղերում փակցվի, թերթիկները, գրքույկները բանվորների մեջ բաժանվի: Հանձնաժողովները պարտավոր են հետևելու, որ ցեխերում ագիտացիոն բաժիններում նյութերի պակասություն չզգացվի և ամենուրեք այնպիսի հայտարարություններ փակցվեն, որոնք փոխառությանը գրվել ցանկացողներին ցույց տան ո՞ւմ մոտ և ինչպես բաժնեգրվել:

59. Հանձնաժողովները փոխառությունները մասսայականացնելու համար, իրենց տրամադրության տակ գտնված բոլոր հնարավոր միջոցները պետք է գործադրեն: Ագիտացիոն ակումբներում, անկյուններում, մրզադաշտերում, հանգստի միջոցին ճաշարաններում և այլն պետք է չափազանց բազմակողմանի ձևով անցկացնել: Նպատակահարմար է, որ շարժական կամ տեղական դրամատիկական խմբակը ագիտ բնույթ կրող ներկայացումներ կազմակերպի, վաղօրոք հրավիրված ֆին-բաժնի միջոցով: Յեթե ձեռնարկությունը սեփական կինո-ապարատ ունի, նպատակահարմար է յուրաքանչյուր սեանսը սկսելուց առաջ փոխառության վերաբերյալ կարճ ֆիլմներ, դիապոզիտիվներ բաց թողնել:

60. Ագիտ գործին կոլեկտիվի բոլոր անդամներին պետք է անխտիր մասնակից դարձնել:

Հատկապես ուշադրություն դարձնել կին բանվորներին, ազգային փոքրամասնության պատկանող բանվորներին, ռուսերեն լավ չիմացողներին և այլ բանվորներին ու ծառայողներին, որոնք ձեռնարկություններում ժամանակավոր աշխատանքով են զբաղված—սեզոնային են. սրանց պետք է հորդորել, որ փոխառության պարտատոմսեր գնեն կամ կանխիկ դրամով, կամ կոլեկտիվ բաժնեգրման միջոցով, այնպիսի ժամկետով, որը համապատասխանի իրենց աշխատանքի տևողականությանը:

61. Ագիտ աշխատանքների մեջ ինչպես փորձը ցույց է տվել նախորդ կամպանիաներում, նպատակահարմար է մրցման մոմենտի օգտագործումը առանձին ցեխերի, արհեստանոցների, բաժինների, նաև առանձին ձեռնարկությունների ու հիմնարկությունների մեջ:

—Բացի դրանից խոշոր գումարի բաժնեգրվողներին, յեթե այդպիսիները հակառակ չեն, թերթերում հայտարարել. այս հանգամանքը կարող է լավ օրինակ ծառայել մյուսներին: Կոլլեկտիվ բաժնեգրությանը մասնակցել չցանկացող կամ ստացած ռոճիկին չհամապատասխանող գումարով գրվող բանվորների ու ծառայողների անունները թերթերում հրապարակելուց պետք է կտրականապես խուսափել:

62. Պետք է տվյալ ձեռնարկության և հիմնարկության պատի թերթը ագիտացիոն նպատակների համար օգտագործել: Բացի դրանից հանձնաժողովները պետք է ֆին-բաժիններից ստանան և հայտնի տեղերում փակցնեն ԽՍՀՄ-ի Ֆինժողկոմի կողմից փոխառությունների վերաբերող հրապարակված պատի թերթերի բլանկներ, վորպիսին լրացնում են տեղական բնույթ կրող հոդվածներով:

63. Ընդհանուր ժողովում փոխառության մասին լսված զեկուցումից հետո, մյուս օրն և յեթ ոժանդակող հանձնաժողովները անցնում են կոլլեկտիվ բաժնեգրության: Բաժնեգրության միջոցին շրջագայում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության բոլոր բանվորների ու ծառայողների մեջ այնքան ժամանակ, մինչև չի վերջանա բոլոր բանվորներին հարցնելու գործողությունը: Այս շրջագայության նպատակն է, վոր կոլլեկտիվի բոլոր անդամները փոխառության բաժնեգրությանը իրանց ցանկությամբ մասնակցեն: Այն աշխատավորները, վորոնք ոժանդակող հանձնաժողովի կողմից նշանակված են շրջագայելու, պետք է իրենց հետ վերցնեն բաժնեգրության թերթիկներ:

64. Շրջագայելն ու հարցումներ տալը ամենից առաջ պարզում է, թե բաժնեգրվել ցանկացող կոլլեկտիվի անդամի պարտատոմսի նոմինալ (իսկական) գումարը վորքանի՞ յե հավասար: Այդ գումարն անց է կացվում բաժնեգրության թերթի մեջ համապատասխան սյունյակում, հարցման յենթարկված ընկերոջ ազգանվան դիմացը: Հետո պարզվում է թե վորքան ամբողջ և վորքան մաս-մաս պարտատոմսեր, վոր թվականի, տոկոսաբեր թե անտոկոսաբեր պարտատոմս է ցանկանում բաժնեգրվողը, այս տեղեկությունները անց են կացվում բաժնեգրության թերթերի մեջ: Լրացված թերթերը նորից վերադարձվում է հանձնաժողովին, վորը տեղեկագիր է կազմում, թե իր կոլլեկտիվում փոխառությանը քանի հոգի յեն բաժնեգրվել:

65. Այս տեղեկությունների մասին ոժանդակող հանձնաժողովը հայտնում է ֆին-բաժնին և գործկոմին կից ոժանդակող հանձնաժողովին, իսկ բաժնեգրման թերթերը ձեռնարկության ու հիմնարկության վարչությանը, վորը նրա անձնական հաշվի մեջ ռոճիկից հետ պահած գումարը նշանակելով ուղարկում է բանկ կամ խնայողական դրամարկղ ձևակերպելու:

66. Հանձնաժողովը ստուգում և մասնակցում է կոլլեկտիվի անդամներին ամրացման կտրոնների բաժանման գործին. այդ կտրոնները բանկի կամ խնայողական դրամարկղի կողմից անմիջապես տրվում է նրանց, ովքեր կոլլեկտիվ բաժնեգրությանը մասնակցել և առաջին մուծումը կատարել են: Հանձնաժողովները հետևում են վոր վարչությունը կոլլեկտիվի յուրաքանչյուր անդամին այն թղթերի և այնպիսի կյուպյուրի կտրոններ տա, վորպիսիները բանվորները բաժնեգրվել են համաձայն իրենց տված հայտարարության:

67. Հանձնաժողովը շաբաթը մի անգամ քննության է առնում թե վորքան են բաժնեգրված և ինչ արդյունքներ է տվել: Յեթե պարզվի, վոր տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության մեջ պարտատոմսերի իրացումը բանվորների ու ծառայողների շրջանում ցանկալի չափով չի ընդգրկված, կամ գործը կաղում է, կամ ընդգրկումը հաջող է անցել, բայց բաժնեգրության միջին գումարը շատ ցածր է, հանձնաժողովը բաժնեգրությունը ուժեղացնելու միջոցներ է ձեռք առնում:

68. Կոլլեկտիվ բաժնեգրության կամպանիան վերջացնելուց հետո հանձնաժողովը տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության բանվորների ու ծառայողների առաջ իր գործունեյության մասին հերթական զեկուցում է տալիս: Ընդհանուր ժողովի վորոշումները հանձնաժողովի գործունեյության գնահատականի հետ միասին տպագրվում է տեղական թերթերում, իսկ վորտեղ այդպիսին բացակայում է ձեռնարկության կամ հիմնարկության պատի թերթում: Վորոշման պատճեն ուղարկվում է գործկոմներին կամ պատգամավորական խորհուրդներին կից ոժանդակող հանձնաժողովներին:

69. Հիմնարկների ու ձեռնարկությունների ստորին ցանցի հանձնաժողովների աշխատանքները փոխառության իրացման շրջանում, գտնվում է տեղական գործկոմի կամ խորհրդին կից ոժանդակող հանձնաժողովի ընդհանուր ղեկավարության տակ:

—Գործկոմի կամ խորհրդին կից ստորին հանձնաժողովները իրենց ձեռնարկություններում և հիմնարկություններում կոլլեկտիվ բաժնեգրություն անցկացնելու վերաբերյալ ընդհանուր ցուցմունքները ստանում են ոժանդակող հանձնաժողովից:

## VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.

70 Ինչպես պետ-փոխառությունը, այնպես էլ խնայողական դրամարկղը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում հանդիսանում է ազգաբնակչության մանր խնայողությունների հավաքման ամենագլխավոր միջոցներից մեկը (իր սկզբնական օրից խնայողական դրամարկղները կարողացել են ներգրավել 500 միլիոն ռուբ. աշխատավորական խնայողություններ):

Պետ-փոխառություններին նման խնդիրներ կատարելով խնայողական դրամարկղները համենայն դեպս զբաղվում են նրանով այն ժամանակ, երբ պետփոխառությունները մշտական կայուն խնայողություններն են հավաքում հաշված երկարատև ժամկետներով, խնայողական դրամարկղները սոցիալիստական շինարարության պետ-բյուջեի մեջ ներգրավում են ժամանակավորապես ազատ միջոցները կամ կարճատև նպատակային կուտակումները. այդպիսով օգնում են աշխատավորներին իրենց աշխատավարձը ռացիոնալ կերպով օգտագործելուն. սովորեցնում են խնայողի կերպով տնտեսելուն (դրամարկղը աշխատավորների քսակն ու գանձապահն է հանդիսանում):

71. Խնայողական դրամարկղները պետ- փոխառությունների նման հանդիսանում են աշխատավորության լայն խավերի գործը: Այդ պատճառով պետ-վարկի և խնայողական դրամարկղի գործին մշտապես օժանդակող հանձնաժողովները, լինելով հասարակական ինքնագործունեության մարմինները, պետք է միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի ակտիվացնեն, ինչպես հասարակության, այնպես էլ աշխատավորական լայն մասսաների ուշադրությունը դեպի խնայողական դրամարկղի գործը, ապահովելով բանվորների ու ծառայողների ներգրավումը:

72. Օժանդակող հանձնաժողովների խնդիրները խնայողական դրամարկղի ասպարեզում կայանում է պրոպագանդա մղելու և նոր ավանդատուներ կամպգրելու մեջ: Տեղեկատու-խորհրդատու աշխատանքների սպասարկման, նաև ամեն տարի խնայողական յերկշաբաթորյակի համամիութենական կամպանիայի նախապատրաստման և անցկացնելու, նաև հետագայում ագիտացիայի ու պրոպագանդայի ամենօրյա սիստեմատիկ աշխատանքի ամբացման ու զարգացման պրոպագանդայի մեջ:



73. Ամեն տարի տարվող խնայությունների համամիութենական յեկշաբաթորյակի կամպանիան հաջողությամբ կազմակերպելու և նախապատրաստելու նպատակով, օժանդակող հանձնաժողովները ա) վերամշակում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության յերկշաբաթորյակների արդյունքների նախապատրաստման ու ամբարդման որացուցային նախագիծը, հարմարեցնելով ու հաստատելով գործկոմների ժողովներում:

բ) Համապատասխան դրամարկղից ստանում և կոլեկտիվի անդամների մեջ զատավորում, նաև աչքի ընկնող տեղերում փակցնում են ագիտ-նյութերը (լոզունգները, թերթիկները, գիմումները, գրքույկները ևայլն):

գ) Կոլեկտիվի ընդհանուր, պատգամավորական ժողովներում բանվորների ու ծառայողների կոնֆերենցիաներում, բոլոր գործարկոմների տեղկոմների նիստերում, կուս-բջիջներում և ուրիշ հասարակական կազմակերպություններում, վորոնք առաջ են յեկել յերկշաբաթորյակի ժամանակ, ապահովում են յերկշաբաթորյակի խնայողական դրամարկղի գործի վերաբերյալ հարցի քննությունը: Զեկուցումներ են կազմակերպում խնայողական դրամարկղի դերի մասին, պետ-վարկի ընդհանուր սիստեմի և ժող-տնտեսության ինդուստրացման թափի արագացման գործում ունեցած դերի մասին: Խոսում են նաև յերկշաբաթորյակի կամպանիայի անմիջական նպատակների, խնդիրների ու նշանակության մասին:

Խնայդրամարկղը իր շուրջն է հավաքում (համախմբում) ու հրահանգում ակտիվին, վորի վրա հետագայում հենվում է կամպանիան անցկացնելու ժամանակ, ցեխերում, բրիգադներում, բաժանմունքներում, կորպուսներում, արհեստանոցներում, հանրակացարաններում և այլն: Խնայողական դրամարկղի գործի մասին անց են կացնում ագիտացիոն բացատրական զրույցներ կես օրվան հանգստի և ուրիշ ժամանակ համաձայն վերևում հիշատակված նախագծի «ա» կետի):

դ) Կամպանիայի ընթացքում խնայողական դրամարկղները նոր ավանդատուներ և ավանդներ ներգրավելու վորպես փորձնական միջոց, օժանդակող հանձնաժողովները բանվորների ու ծառայողների աշխատավարձի մի վորոշ մասը բաց են թողնում խնայդրամարկղի միջոցով, այդ պատճառով օժանդակող հանձնաժողովները կամավոր գրվողներին տալիս են հայտարարությունների թերթեր կամ ցուցակներ, վորտեղ նշանակում են

# VI. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ.

70 Ինչպես պետ-փոխառությունը, այնպես էլ խնայողական դրամարկղը ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում հանդիսանում է ազգաբնակչության մանր խնայողությունների հավաքման ամենագլխավոր միջոցներից մեկը (իր սկզբնական օրից խնայողական դրամարկղները կարողացել են ներգրավել 500 միլիոն ռուբ. աշխատավորական խնայողություններ):

Պետ-փոխառություններին նման խնդիրներ կատարելով խնայողական դրամարկղները համենայն դեպս զբաղվում են նրանով այն ժամանակ, յերբ պետփոխառությունները մշտական կայուն խնայողություններն են հավաքում հաշված յերկարատև ժամկետներով, խնայողական դրամարկղները սոցիալիստական շինարարության պետ-բյուջեյի մեջ ներգրավում են ժամանակավորապես ազատ միջոցները կամ կարճատև նպատակային կուտակումները. այդպիսով օգնում են աշխատավորներին իրենց աշխատավարձը ռացիոնալ կերպով օգտագործելուն. սովորեցնում են խնայողի կերպով տնտեսելուն (դրամարկղը աշխատավորների քասան ու գանձապահն է հանդիսանում):

71. Խնայողական դրամարկղները պետ- փոխառությունների նման հանդիսանում են աշխատավորության լայն խավերի գործը: Այդ պատճառով պետ-վարկի և խնայողական դրամարկղի գործին մշտապես օժանդակող հանձնաժողովները, լինելով հասարակական ինքնագործունեության մարմինները, պետք է միջոցներ ձեռք առնեն, վորպեսզի ակտիվացնեն, ինչպես հասարակության, այնպես էլ աշխատավորական լայն մասսաների ուշադրությունը դեպի խնայողական դրամարկղի գործը, ապահովելով բանվորների ու ծառայողների ներգրավումը:

72. Օժանդակող հանձնաժողովների խնդիրները խնայողական դրամարկղի ասպարեզում կայանում է պրոպագանդա մղելու և նոր ավանդատուներ կամագրելու մեջ: Տեղեկատու-խորհրդատու աշխատանքների սպասարկման, նաև ամեն տարի խնայողական յերկշաբաթօրյակի համամիութենական կամպանիայի նախապատրաստման և անցկացնելու, նաև հետագայում ագիտացիայի ու պրոպագանդայի ամենօրյա սիստեմատիկ աշխատանքի ամրացման ու զարգացման պրոպագանդայի մեջ:



73. Ամեն տարի տարվող խնայողությունների համամիութենական յեկշաբաթօրյակի կամպանիան հաջողությամբ կազմակերպելու և նախապատրաստելու նպատակով, օժանդակող հանձնաժողովները ա) վերամշակում են տվյալ ձեռնարկության կամ հիմնարկության յերկշաբաթօրյակների արդյունքների նախապատրաստման ու ամրապնդման օրացուցային նախագիծը, հարմարեցնելով ու հաստատելով գործկոմների ժողովներում:

բ) Համապատասխան դրամարկղից ստանում և կոլլեկտիվի անդամների մեջ դասավորում, նաև աչքի ընկնող տեղերում փակցնում են ագիտ-նյութերը (լոզունգները, թերթիկները, դիմումները, գրքույկները և այլն):

գ) Կոլլեկտիվի ընդհանուր, պատգամավորական ժողովներում, բանվորների ու ծառայողների կոնֆերենցիաներում, բոլոր գործարկումների տեղկոմների նիստերում, կուս-բջիջներում և ուրիշ հասարակական կազմակերպություններում, վորոնք առաջ են յեկել յերկշաբաթօրյակի ժամանակ, ապահովում են յերկշաբաթօրյակի խնայողական դրամարկղի գործի վերաբերյալ հարցի քննությունը: Զեկուցումներ են կազմակերպում խնայողական դրամարկղի դերի մասին, պետ-վարկի ընդհանուր սիստեմի և ժող-տնտեսության ինդուստրացման թափի արագացման գործում ունեցած դերի մասին: Խոսում են նաև յերկշաբաթօրյակի կամպանիայի անմիջական նպատակների, խնդիրների ու նշանակության մասին:

Խնայդրամարկղը իր շուրջն է հավաքում (համախմբում) ու հրահանգում ակտիվին, վորի վրա հետագայում հենվում է կամպանիան անցկացնելու ժամանակ, ցեխերում, բրիգադաներում, բաժանմունքներում, կորպուսներում, արհեստանոցներում, հանրակացարաններում և այլն: Խնայողական դրամարկղի գործի մասին անց են կացնում ագիտացիոն բացատրական զրույցներ կես օրվան հանգստի և ուրիշ ժամանակ համաձայն վերևում հիշատակված նախագծի «ա» կետի):

դ) Կամպանիայի ընթացքում խնայողական դրամարկղները նոր ավանդատուներ և ավանդներ ներգրավելու վորպես փորձնական միջոց, օժանդակող հանձնաժողովները բանվորների ու ծառայողների աշխատավարձի մի վորոշ մասը բաց են թողնում խնայդրամարկղի միջոցով, այդ պատճառով օժանդակող հանձնաժողովները կամավոր գրվողներին տալիս են հայտարարությունների թերթեր կամ ցուցակներ, վորանց նշանակում են

այն բանվոր–ծառայողներին, վորոնք ցանկություն են հայտնում իրենց ռոճիկից գանձումներ կատարել:

ե) Օժանդակող հանձնաժողովները հաստատում են այդ ցուցակները և հանձնում վարչությանը, վոր նշանակված գումարները հետ գանձվեն բանվորների ու ծառայողների ռոճիկից հիմնարկության կամ ձեռնարկության դրամարկղի միջոցով: Նրանք հետևում են, վոր հետ պահված գումարները ռոճիկ ստանալու հաջորդ որը վարչության կողմից անմիջապես հանձնվի խնայողական դրամարկղին և ձևակերպվի վորպես ավանդ: Բացի դրանից օժանդակող հանձնաժողովները հետևում են, վոր համապատասխան դրամարկղներ ամենակարճ ժամանակամիջոցում իրենց լիազորների կամ ագենտների միջոցով կամագրվող ավանդատուների լրացրած խնայողական գրքույկները հանձնեն:

զ) Օժանդակող հանձնաժողովները նայած տեղական պայմաններին, կարող են կիրառել նաև ուրիշ մեթոդներ:

Այսպես օրինակ կոլլեկտիվի ընդհանուր ժողովի գումարումը կարելի յե համաձայնեցնել աշխատավարձի բաժանման նախօրյակին կամ նույն որը օժանդակող հանձնաժողովները ձեռնարկության կամ հիմնարկության խնայողական դրամարկղների ներկայացուցիչներին հրավիրվում են, վորպեսզի ժողովից անմիջապես հետո, ձեռնարկության կամ հիմնարկության դրասենյակում, այսինքն խնայողական դրամարկղի ներկայացուցչի ռոճիկ բաժանած տեղում կարողանան անմիջապես ըստ հայտարարության թերթերի դրամներ ընդունել և կոլլեկտիվի անդամներին խնայողական գրքույկներ բաժանել:

է) Յերկշաբաթօրյակի կամպանիան տանելիս, օժանդակող հանձնաժողովները առանձին բրիգադաների, համքարությունների, բանվորների ու ծառայողների կոլլեկտիվների մեջ մրցակցություն են կազմակերպում, թե դրամարկղի համար ով շատ ավանդատուներ կհավաքի: Լայն կերպով մասսայականացնում են կոլլեկտիվներին ուղղած կոչերը պատի թերթի, տեղական մամուլի միջոցով: Կազմակերպում են պատգամավորներ, դիմումներ և նամակներ ուղարկելու մեթոդը, հարևան կամ միատեսակ ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների կոլլեկտիվների ու նաև գյուղի մեջ: Մեր 1–7 կետերում հիշատակած ձեռնարկումներն անցկացնելու օժանդակող հանձնաժողովներն պետք է աշխատեն, վոր պրոֆպատգամավորներն,



պրոֆլիազորները, ձեռնարկություններում աշխատող պրոֆմիության անդամներն ու այլ ակտիվ ընկերներ, նրանց գործում ակտիվ մասնակցություն ցույց տան:

ժ) Յերկշաբաթօրյակի աջակցության կամպանիան անցկացնելու օժանդակող հանձնաժողովները կարող են նաև նույն հրահանգի «բ» գլխում ցույց տված կետերով առաջնորդվել:

74) Յերկշաբաթօրյակի կամպանիան անցկացնելու ժամկետը լրանալուց հետո, օժանդակող հանձնաժողովները արդյունքների մասին կազմած հաշվետվությունը տանում են համաձայն նույն գրքույկի Բ. գլխի 68 կետի:

75. Յերկշաբաթօրյակի կազմակերպման միջոցով օժանդակող հանձնաժողովները ա) ստուգում են ռոճիկից հետ պահած տոկոսների հայտարարության կիրառումը. ստուգում են թե ռոճիկի %ների կամավոր գանձումները ինչպես է կատարված. հետևում են, վոր ձեռնարկությունների ու հիմնարկությունների վարչությունը վոչ մի դեպքում իր դրամարկղում հետ պահած գանձումները չդանդաղեցնի և անհապաղ փոխադրի խնայողական դրամարկղը:

Բ) Օժանդակող հանձնաժողովներն առանձին ուշադրություն են դարձնում, վոր խնայողական դրամարկղը մուծված ռոճիկներից գանձված տոկոսները անպայման կամավոր կերպով կատարվի, վոչ մի դեպքում ստիպողական միջոցների չդիմել:

Գ) Օժանդակող հանձնաժողովները նույնպես առանձին ուշադրություն են դարձնում նպատակային կուտակումների նախնական ձևերին կուլտուր–կենցաղային նպատակների համար. (զանազան ընտանեկան մատչելի ու անհրաժեշտ իրերի հայթհայթման, տեղերի ձեռք բերելը հանգստյան տներում, արձակուրդն անցկացնելու համար միջոցների կուտակումն էքսկուրսիա և ճամբորդության (տուրիզմը), մրցանակային գործիքների ու պարագաների հայթայթումն և այլն):

Դ) Օժանդակող հանձնաժողովներն ավանդների խիստ գաղտնությունն են ապահովում, այդպիսին բաց անողներին յենթարկում են օրենքով սահմանված քրեական ծանր պատասխանատվության:

Ե) Օժանդակող հանձնաժողովները ապահովում են ձեռնարկություններին ու հիմնարկություններին կցված այնպիսի աշխատավորների նշանակումը, վորոնք բանվորների ու ծառայողների համակրանքն են վայելում և վորոնց հավատում են:

–Ապահովում են, վոր դրամարկղներին այնպիսի տեղ հատկացվի, վոր հնարավոր լինի ավանդների գաղտնությունը պահել. դրամարկղները այնպիսի ժամերին աշխատեն, վոր բանվորներն ու ծառայողները ոգտվել կարողանան: Ոժանդակող հանձնաժողովները արտադրական խորհրդակցություններում և եկոնոմ կոմիսիաներում քննության են առնում այնպիսի հարցեր, վորոնք կապված են խնայողական դրամարկղի գործարքային տեխնիկայի, ներքին կարգ ու կանոնի հետ:

Է) Արձակուրդի սեզոնին ոժանդակող հանձնաժողովները ագիտացիոն բացատրական աշխատանք են տանում, վորպեսզի բանվորներն ու ծառայողներն խնայողական դրամարկղի ակկրեդիտիվներից ոգտվեն: Այս հանգամանքը դրամը կորչելուց, իզուր վատնելուց և ճամբորդության միջոցին գողացվելուց զերծ պահելու ամենալավ միջոցն է:

Ը) Ոժանդակող հանձնաժողովները խնայողական դրամարկղի գործի ագիտացիայի ու պրոպագանդայի սիստեմատիկ աշխատանքը կազմակերպելիս, յերկշաբաթորյակը անցկացնելուց հետո առաջնորդվում են սույն հրահանգի 3-րդ գլխի ցուցմունքներով:

Թ) Ոժանդակող հանձնաժողովները իրենց աշխատանքների ընթացքում պետք է անպայման գյուղում խնայողական դրամարկղների գործի զարգացմանը մասնակցություն ցույց տան: Այս գործը անց են կացնում դեպի գյուղ արձակուրդ գնացող բանվորների ու ծառայողների միջոցով. յերկրորդ՝ ժամանակավոր կամ սեզոնային բանվորների մեջ խնայողական դրամարկղի գործը ուժեղացնելու ագիտացիա և պրոպագանդա մղելով: Ոժանդակող հանձնաժողովները վորպես պրակտիկ միջոց կարող են գյուղական ոժանդակող հանձնաժողովների շեֆությունն ընդունել:

76. Ոժանդակող հանձնաժողովները պետք է լավ գիտակցեն, վոր խնայողական դրամարկղի գործի հաջողությունը պայմանավորված է հաճախորդների ու ավանդատուների սպասարկման վորակով:

–Թերի ու անփույթ աշխատանքը, կոպտությունը անտարբեր ու անուշադիր վերաբերմունքը դեպի հաճախորդները բյուրոկրատիզմը և այլն խեղաթյուրումներ կարող են հետ վանել բանվորների ու ծառայողների լայն մասսաներին պետ–վարկի հիմնական բազայից՝ դրամարկղից: Այդ պատճառով ոժանդակող հանձնաժողովի ամենաէական կազմակերպչական խնդիրը հա–



սարակական կոնտրոլի ակտիվացումն է հանդիսանում: Այս կոնտրոլի ոգնությամբ է, վոր բանվորական քննադատությունը զարգանալով ու խրախուսվելով հսկում է խնայողական դրամարկղի գործունեության վրա, մշակում է խնայողական դրամարկղի ապարատում աշխատողների ընտրության հարցը, սահմանում է սիստեմատիկ հաշվետվության կարգը և հետևում, վորպեսզի դրամարկղում աշխատողները բանվոր ու ծառայող մասսաների առաջ վորոշ պատասխանատվություն զգան:

77. Նույն այդ նպատակով ոժանդակող հանձնաժողովները միջոցներ են ձեռք առնում, վորպեսզի աչքի ընկնող տեղերում բողոքի արկղներ կախ տրվեն (պահանջելով այդպիսիները համապատասխան դրամարկղներից):

Ամիսը 2 անգամ կանոնավոր կերպով բաց են անում այդ արկղերը բանվորների ու ծառայողների ներկայացուցիչների ներկայությամբ: Բողոքներին նայելը և նրանց առթիվ վորոշ միջոցներ ձեռք առնելը կատարվում է ոժանդակող հանձնաժողովների նիստերում և արձանագրվում է: Իհարկ է հայտնելով բողոքավորներին իրենց տված բողոքների հետևանքների մասին:

Խ.Ս.Հ.Մ. ԿԳԿ կից պետ–վարկին և խնայդրամարկղին
ոժանդակող կենտրոնական հանձնաժողովի Նախագահ՝
Ս. ՉՈՒՑԿԱՅԵՎ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0205613

27954